

Մեղրածոր համայնքի Աղավնածոր գյուղ
Բնակչություն՝ 1306

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղի ներկայիս անվանումը - Աղավնածոր
Գյուղի պատմական անվանումները - Բարաբքի

Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը - 1830 թվական

սահմանակից է - Զրազդան, Մարմարիկ, Մեղրածոր

Գյուղի մակերեսը - 3566 հա

Յեռավորությունը մայրաքաղաքից - 60 կմ

Բնակչության թիվը - 1306 մարդ

Բնակչության կազմը - հայեր

Օգտակար հանածոներ - գրանիտ

Կրթական հաստատություններ - 1

Մշակութային հաստատություններ - 1

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն, հողագործություն

Հայտնի մարդիկ - Արամ Դանիելյան, Անդրանիկ Մանուկյան

Հոգևոր կառույցներ - VII դարում կառուցված եկեղեցի

Գյուղի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

1830 թվականին գյուղը վերաբնակեցվել է Ալաշկերտի Ղազի գյուղից եկած 28 մարդկանցով, որոնք գաղթել էին ռուս-թուրքական պատերազմից հետո: Գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև: Գյուղում զարգացած է զբոսաշրջությունը, քանի որ այն ունի գեղատեսիլ վայրեր և գործող բազմաթիվ հանգստյան տներ: Համայնքն ունի հերոսական անցյալ: Հայրենական մեծ պատերազմին համայնքից մասնակցել են 300 հոգի, որից 76-ը ետ չեն վերադարձել: Արցախյան պատերազմի առաջին իսկ օրվանից գյուղի երիտասարդներից կազմավորվել է «Ալաշկերտ» ջոկատը, որի հրամանատարն էր Չարզանդ Դանիելյանը, ով 1991 թվականին Գետաշենի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհվեց: Այժմ նրա անունով է կոչվում Աղավնածորի միջնակարգ դպրոցը: Արցախյան պատերազմում զոհվեցին նաև Աղավնածորի զավակներ Անդրանիկ Խաչատրյանը և Արթուր Պետրոսյանը:

